

Այսօր նորէն բացակայ գտնուեցաւ Ս. Պատրիարք Հայրը, տկարութեան պատճառաւ: Երեսփոխաններէն շատերը ներկայ չէին իրենց... քաջառողջութեանը պատճառաւ: Անոնք միայն ներկայ էին, որ թեթեւ հարբուի ունէին:

Դիւանի նորընտիր անդամները միաբերան հրաժարական տուին. Ս. Պատրիարքին պիտի յանձնարարեն, որ դիւանին անդամներուն երթայ եւ աղաչէ, որ իրենց պաշտօնը ազգասիրաբար կատարեն:

Ազգային ժողովոյ մէջ պաշտօն յանձն առնելն ալ ձեւեր ունի, ինչպէս տուններու մէջ խահվէ կամ թէյ խմելը.

- Հրամմեցէ՛ք, առէ՛ք ձեր թէյը:
- Շնորհակալ եմ, ես չեմ ուզեր:
- Կ'աղաչեմ, ընդունեցէ՛ք:
- Դուք հրամմեցէք:
- Ես ալ պիտի առնեմ:
- Եթէ դուք առնէք՝ ես ալ կ'ընդունեմ:
- Եւ թէյը վերջապէս կը խմուի...

**

Իմ կողմէս հարցապնդում մը երեսփոխանական ժողովոյն.

–Ծովուն տակը չերթալու համար շատերը դդում կը կապեն իրենց թելերուն վրայ. երկինք չհամբառնալու համար թեթեւներն ինչո՞ւ համար կապար չեն կապեր իրենց ոտներուն, երբ ցամաքի վրայ գտնուին:

19 Յուլիս

Կարո՞ղ էք խորանէն թատերաբեմ ցատկել:

Պատասխան տուէք. համարձակութիւն ունի՞ք *«Ի մէջ տաճարիս եւ առաջի աստուածընկալ»* եւ այլն ըսելէն ետքը *«Լա դօննա է մօպիլէ, քուսլ բիում ալ վէնթօ»* երգել:

Եթէ դուք կարող չէք՝ Թարգմանեան գերապատիւ Անտոն վարդապետն կարող է:

Այո՛, այս վարդապետն Ֆօքշանի մէջ եկեղեցականութիւնը թողլով՝ Կալաքի մէջ իտալական թատերաբեմին վրայ դերասանութիւն ընել սկսած է: